# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.06.2018թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

## 1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-18/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով իրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **<< Ֆոտոն>> ՍՊԸ (ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի փող. շ. 14, բն.21)**
2. **<< Օլանդա>> ՍՊԸ(ՀՀ, ք. Գյումրի, Ախուրյանի խճ. 6/1)**
3. **<< Սեմանգ >>ՍՊԸ(ՀՀ, ք. Աշտարակ)**
4. **« ՍԵՆԴԱ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8/16)**
5. **« Արգավանդ Կահույք» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Արգավանդի խճ.)**
6. **«ՊՐԻՄԴԻՓ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, ՇՈՎՐՈՅԱՆ Փ. Տուն 72)**
7. **« Սմարթլայն» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110)**
8. **« Վանդեկոր» ՍՊԸ (ՀՀ, ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-4, 22/9)**

## 2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ «**Օլանդա**» ՍՊԸ-ի հայտի. Armeps համակարգում ոչ մի փաստաթուղթ կցված չէ:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **«ՊՐԻՄԴԻՓ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտի. կազմակերպության գնային առաջարկում կա հաշվարկային սխալ/ԱԱՀ-ի գումարը ճշգրիտ հաշվարկած չէ/:

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը**

| Չ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **<< Սեմանգ >>ՍՊԸ** | **<< Ֆոտոն>> ՍՊԸ** | **«ՍԵՆԴԱ» ՍՊԸ** | **« Արգավանդ Կահույք» ՍՊԸ** | **«Վանդեկոր» ՍՊԸ*** | **« Սմարթլայն» ՍՊԸ** | **«ՊՐԻՄԴԻՓ» ՍՊԸ** |
| 1 | **գրասեղաններ** | **31** | **1481800** | 1157850 | 1206106.67 | 1387250 | 2053750 | 3503000 | 2970833.33 | 7233044 |

* Կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ չվճարող

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը որոշեց.**

1.1 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝
1 չափաբաժնի համար **« Սեմանգ » ՍՊԸ –ին,**

1.2 Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝
1 չափաբաժնի համար **« Ֆոտոն» ՍՊԸ –ին:**

2. Մերժել «**Օլանդա**» ՍՊԸ **-ի և «ՊՐԻՄԴԻՓ» ՍՊԸ -ի** կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________ Վ. Պետրոսյան

________ Վ.Մկրտչյան

________ Մ.Անտոնյան

________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________ Մ.Մուրադյան